

Ա. Ս. Խ. Հ. Հ Ո Ղ Ժ Ո Ղ Կ Ո Մ Ա Տ

Ա. Ս. Խ. Հ. ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ
1933 Թ. ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՁԵՎԵՐԻ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ДОСТОУПЬЕННИ
Академии Наук
СССР

338.14

Ա-11

ԱՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

ԲԱԳՈՒ — 1933

34-11
Ca 541

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

338.14
Ա-11

Հանձնված և արտադրութեան ապրիլի 28-ին
Ստորագրված և տպագրութեան մայիսի 2-ին
Տպագրական թերթերի թիվը
Տպագրական նշանների թիվը 52080

Տեխ. խմբ. Գ. Թ ա ու լ ա ն յ ա ն
Սրբազրեց—Չ ա լ ա ը ի

«Աշխատանքի քանակի և արտադրանքի բաշխման հաշվեառում և վերահսկութուն,—սրա մեջ է կայանում սոցիալիստական վերափոխութեան ելուցիւթունը, չերբ պրոլետարիատի քաղաքական տիրապետութիւնը ստեղծված ու ապահովված է»: Այսպիսի բաներով և կենինը բնորոշել պահասարակ հաշվեառման նշանակութիւնը: Նրա այս բառերը լիովին և ամբողջապես վերաբերում են նաև հաշվեառմանը կոլխոզներում: Իրա հետ միասին Հողագործութեան Ժող. Կոմիսար ընկ. Յակովլևի ղեկուցման առթիվ ԽՍՀՄ Կենտգործկոմի 1933 թ. հունվարի 30-ի վորոշումը կոլխոզներում յեղած հաշվեառման մասին—մատնանշում է, վոր «աշխատանքի և արտադրանքի հաշվեառումը, առանց վորի կոլխոզային տնտեսութիւնը չի կարող գոյութիւն ունենալ, մեծ մասամբ անբավարար է զրված»: Իսկ առանց դրան, ասում է նույն վորոշումը, «խոսք անգամ չի կարող լինել կոլխոզների տնտեսական ամրապնդման և կոլխոզնիկների բարեկեցութեան աճման մասին»:

Կուլակները և կոլխոզային շինարարութեանը թշնամի տարրերն ողտվում են հաշվեառման թերութիւններէից հասարակական կոլխոզային սեփականութիւնը հափշտակելու համար, կոլխոզային տնտեսութիւնը քայքայելու համար, հակակոլխոզային ազխտացիա մղելու համար և այլն:

Այստեղից բղխում է այն ահագին նշանակութիւնը, վոր ունի կոլխոզային հաշվեառման ու վերահսկութեան ճիշտ կազմակերպումը և նրա մեջ կոլխոզային տնտեսութիւնում կատարվող ամեն մի բանի ստույգ արտացոլումը, վորովհետև ճիշտ կերպով զրված հաշվեառումն ու վերահսկութիւնն անհրաժեշտ զենք են հանդիսանում հասարակական (սոցիալիստական) սեփականութիւնը պրոլետարիատի և կոլխոզային գյուղացիութեան դասակարգային թշնամիներից պաշտպանելու պայքարում:

Ահա թե ինչու Կենտգործկոմն իր վորոշման մեջ ասում է. «Ամեն մի խաբելութիւն կոլխոզային արտադրանքի, կոլխոզային աշխատանքի և կոլխոզային բերքի հաշվեառման գործում պետք է համարվի վորպես աջակցութիւն կուլակին և հակախորհրդային տարրերին, վորպես կոլխոզային ունեցվածքի հափշտակման փորձ»:

ԿՈՒՆՈՋԻ ԱՆԿԱՄՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՇՎԵԱՌՄԱՆ ԳԻՐԲ

Այս գիրքը նշանակված է կոլխոզի ամբողջ կազմի հաշվեառման համար՝ ըստ հասակի, սեռի, ազգութիան և մասնագիտութեան: «Մասնագիտություն» սյունյակի մեջ մտցրվում է այն աշխատանքը, վորի մեջ կոլխոզնիկը ամենամեծ հմտությունն ունի: Որինակ, գութանող, ջրող, անասնապահ, ձիապահ, հովիվ, փականագործ, քարտաշ և այլն:

Կոլխոզ մտած նոր անդամները գրանցվում են ժամանակագրական (քրոնոլոգիական) կարգով, իսկ հեռացած անդամների մասին համապատասխան նշաններ են արվում գրքի վերջին սյունյակում:

Կոլխոզնիկի ընտանիքի կազմի ավելացումը ձևակերպվում է ընտանիքի նոր անդամների գրանցումով՝ համապատասխան ազգանունների տակ: Իսկ հեռացածների մասին (ղուրս արվածները, հեռացածների, մահացածների մասին) գրանցում է կատարվում «Նկատողություններ փոփոխությունների մասին» սյունյակում:

Այդ նույն գրքի մեջ մտցրվում են հասարակական ունեցվածքն է կոլոզնիկները մուտքի վճարները (вступительный взнос) գրանցումները: «Մուծված է ֆոնդերը» (зачислено в фонды) յենթավերնագրի «անբաժանելի» սյունյակը մտցրվում է կոլխոզնիկի համայնացրած ունեցվածքի արժեքի այն մասը, վորը հաշված է վորպես անբաժանելի ֆոնդ, իսկ «փայային» սյունյակը—այն, վորը հաշված է վորպես փայային ֆոնդ: «Հասնում է մուտքի վճար» (принимается вступ. взносов) սյունյակը մտցրվում է կոլխոզի համար սահմանված մուտքի վճարի գումարը, հասցա «Մտցրված է» վերնագրի տակ

61244-6
Հ. Ա. ՄԱՍԻՍԻԱՆ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԻՄՅԱՆԻ ԱՍՊԵՐԱԿԱՆ ԿՈՒՆՈՋԻ ԱՆԿԱՄՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՇՎԵԱՌՄԱՆ ԳԻՐԲ

«Թիվ» և «Գումար» սյունյակները մտցրվում է այն գումարը, վորը կոլխոզի անդամն արդեն մտցրել է և մասնանշվում է, թե յերբ է մտցրված: Որինակ՝ 3/11—25 ուղբի և այլն:

ԿՈՒՆՈՋԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ՅՈՒՑԱԿԱԳՐՄԱՆ ԳԻՐԲ

Այս գրքի մեջ մուծվում է կոլխոզի ամեն մի ունեցվածքը (բացի թիերից, բրիչներից, Թանագին ամանեղենից և այլ եծանանոց, արագ մաշվող առարկաներից) հետևյալ կարգով. գրվում է գրանցման համարն ըստ կարգի և ունեցվածքի անունը: «Ունեցվածքի նկարագրությունը՝ ամենագլխավոր հատկանիշներով» սյունյակի մեջ մտցրվում է գրանցվող ունեցվածքի համառոտ նրկարագրությունը: Որինակ 4 խովանի գութաններ—նոր կամ հին: Մերինոս վոշխարներ՝ 1 տարեկանից սկսած, կոշակամ նուրբ բրգով: Արտագրող ցուլ այս ինչ ցեղի, այս ինչ հասակի: Տեղական կով՝ առաջին անգամ ծնած, յերեք տարեկան: Սարայ—փայտի կամ քարի, 15 × 10 խոր. մեծ: Աշխատանքի ձի՝ 3 տարեկանից ավելի, տեղական ցեղի: Պողատու հին ծառեր, պղտղատու նոր ծառեր և այլն:

Ամեն մի ունեցվածք կրում է ինվենտարային վորոշ համար, վորը մտցրվում է «Ինվենտարային համար» սյունյակը: «Բանակը» սյունյակում գրվում է այն առարկաների քանակը կամ թիվը, վորոք ունին մեկ ինվենտարային համար: Պետք է ի նկատի առնել, վոր մեկ ինվենտարային համարով պետք է նշանակել իսկպես միատեսակ առարկաները, կառուցվածքները, բոլոր շենքերը չի կարելի խառնել մեկ ինվենտարային համարի տակ: Յեթե վոշխարները միատեսակ են, նրանց կարելի է նշանակել մեկ ինվենտարային համարով, բայց յեթե նրանց մեջ կան աղնվացեղերը, նրանց առանձին են գրում և նրանք ուրիշ ինվենտարային համար են ստանում և այլն:

«Արժեքը» սյունյակը մտցրվում է ունեցվածքի արժեքը՝ համաձայն 1933 թ. հունվարի 1-ի ինվենտարային գնահատման իսկ յեթե ունեցվածքը ձեռք է բերված այդ ժամկետից հետո, նա

զբանցման և յենթարկվում իր փաստական արժեքի համաձայն: Առհասարակ գիրքը պետք է լցված լինի ինվենտարի ցուցակազրույթյան նյութերով, վորը կատարվել է տարվա հաշվետվությունը կազմելու և յեկամուտները բաշխելու ժամանակ:

«Նկատողությունների համար» (для отметок) սյունյակում մատնանշվում է, վոր արտագրական բրիգադային կամ վոր պաշտոնական անձին է կոխողում ամրացրված տվյալ ունեցվածքը:

Նույն սյունյակում նշաններ են արվում ունեցվածքի պահասելու մասին՝ համաձայն ունեցվածքի լիկվիդացիայի ակտի:

ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱԿՏ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս ձևի մեջ մտցրվում են անասունների բոլոր տեսակներից ծնվածները, հետևյալ կարգով: Մատնանշվում է, թե վոր ապրանքային ֆերմաներում են ծնվել անասունները, իսկ վորտեղ ֆերմա չկա, վոր ճյուղում են ծնվել՝ որինակ, վոչխարաբուծության, խոզարուծության, խոշոր յեղջուրավորների և այլն: Նույն տեղը մատնանշվում է այն անասունների տեսակը, վորոնց նըկատմամբ զբանցվում են նոր ծնվածները:

«Մոր անունը և ցեղը» սյունյակում անողայման պետք է մատնանշել անունը, ցեղը և ինվենտարային համարը: «Կենդանի ծնվել են» յենթավերնադրի տակ պետք է բաժանել վորձերի և եգերի, ապա սյունյակների դասավորության կարգով պետք է մատնանշել ծնվածի քաշը, նրան տված ինվենտարային համարը (միայն այն անասունների նկատմամբ, վորոնց մասին ինվենտարային հաշվետուում է կատարվում) և անողայման անասնապահի, հովվի կամ այդ անասունի համար պատասխանատու այլ անձնավորության ստորագրությունը: Զեկուցման ակտը «Ծնված անասունների մասին» (о приплоде) փաստաթուղթ է հանդիսանում ծնված անասուններին ինվենտարի մեջ մտցնելու համար «Կոխողի ունեցվածքի ցուցակագրման» զրքում:

Յեթե կատարվում է խոշոր յեղջուրավոր անասուններից ծնվածների գրանցումը, ծնվածների քաշը պետք է նշանակել

ամեն մի անասունի համար առանձին, իսկ յեթե մանր յեղջուրավորներից կամ խոզերից ծնվածների գրանցում է կատարվում, քաշը նշանակվում է բոլոր վորձ և եգ նոր ծնված անասունների ընդհանուր քանակի համար: Իսկ «Մոր անունը և ցեղը» սյունյակում մատնանշվում է բոլոր ծնած մայրերի քանակը, յեթե դա վերաբերվում է խոզերին, վոչխարներին և այժերին:

ՈՒՆԵՅՎԱԾՔԻ ԼԻԿՎԻԴԱՅԻԱՅԻ ԱԿՏ

Այդպիսի ակտ կազմվում է ամեն մի դեպքում, յերբ ունեցվածքը կամ նրա մի մասը լիկվիդացիայի է յենթարկվում բոլորովին կամ լիկվիդացիայի է յենթարկվում իր նախնական ձևով և զբա հետևանքով լիկվիդացիայից հետո ստեղծվում է մի ինչ վոր նոր ունեցվածք, առարկաներ կամ արժեք ունեցող մեթերքներ: Որինակ, հիվանդ ձին սատկել է: Վորպես ձի, նա դուրս է գրվում ունեցվածքից, բայց մաշկած կաշին գրվում է ակտի մյուս յերեսում՝ համաձայն այնտեղ յեղած ցուցանիշների: Կամ, որինակ, մորթել են յեղ, խոզ, կով և այլն: Նույն ձևով վորպես ինվենտար նա դուրս է գրվում ակտի առաջին յերեսում, իսկ հակառակ կողմը, մյուս յերեսում, մուծվում են ստացած մեթերքները և նյութերը՝ միսը, կաշին և այլն:

Գուլթանները, ցաքանները և այլ գյուղատնտեսական ինվենտարը կամ ունեցվածքը լիկվիդացիայի դեպքում ունեցվածքից դուրս են գրվում, իսկ ակտի մյուս յերեսում մուծվում է այն, ինչ վոր ստացվել է լիկվիդացիայի յենթարկված ունեցվածքից՝ յերկաթի կտորտանք, մեխեր և այլն: Այդ ակտը կազմում է հանձնաժողովը և հաստատում է կոլխոզի նախագահը, իսկ հետո հանձնվում է հաշվապահին հետագա զբանցումների համար ինվենտարային զրքում կամ մատնանշանի (ամբարապահի) զրքում (книга кладовщика).

ԲԵՌՆԱԳԻՐ

Բեռնագիրը (накладная) լցվում է ամեն մի բեռ կոլլտոդից դուրս ուղարկելիս: Մատնանշվում է բրիգադայի համարն ու անունը, կտապանի զոգանունը, համարն ըստ կարգի և ուղարկելու ամսաթիվը: «Ուղարկման կետը» սյունյակում պետք է մատնանշել, թե ուր է ուղարկվում բեռը, վոր յերկաթուղային, ջրային կամ ուտոնական կետը: Բեռնագրի ձախ կողմում մատնանշվում է, քանի սալ է ուղարկված, քանի կտոր (մեշոկ, բարդան, չվալ, արկղ և այլն): Բեռնագրում նույնպես մատնանշվում է ուղարկվող նյութերի կամ մթերքների քաշը, իսկ աջ կողմում նույնպիսի գրանցում կատարում է այն անձնավորությունը, վորը տեղում ընդունում է բեռը: Բեռնագրում անպատճառ պետք է լինեն ուղարկողի, հանձնողի և տեղում բեռն ընդունողի ստորագրությունը: Բեռնագիրը գրվում է 3 որինակով, վորոնցից մեկը, արմատը (копешок) մնում է ուղարկողի մոտ, մյուսը, բեռը ստանալու մասին նշան անելուց հետո, սալապանի միջոցով նորից վերադարձնվում է ուղարկողին, իսկ յերրորդ որինակը տրվում է ստացողին բեռի հետ միասին:

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ (ՊԱՋԱՆՁ)

Ամբողջ տարվա համար կարգադրությունների մաքուր բլանկների գրքուկները (բլոկնոտները) համարադրվում են և ամբողջվում են կոլլտոդի նախագահի և հաշվապահի ստորագրություններով:

Գրքուկներն ամբողջ կոլլտոդի համար պետք է ունենան ընդհանուր համարագրում (նոմերացիա ըստ կարգի): Կարգադրությունը լցնում է կոլլտոդի նախագահը կամ վարչության անդամը, յերբ հարկավոր է կարգադրել բաց թողնել վորև է մթերք կամ նյութ: Առանց այս փաստաթղթի մատանապանը կամ տրնտեսություն վարիչն իրավունք չունի վոչ ոքի վորև է բան բաց թողնելու: Մատնանշվում է համարն ըստ կարգի, այն, թե ում

և ինչ նպատակով և բաց թողնվում մթերքը կամ նյութը, բաց թողնելիքի անունը, քանակը կամ քաշը: Որինակ. ցորեն՝ ըստ աշխատորերի ավանսով տալու համար կամ սերմի համար: Մեխ — 16 կիլոգրամ: Տնտեսություն վարիչը կամ մատանապանն ապրանք բաց թողնելիս համապատասխան սյունյակներում պետք է մատնանշեն, թե վորքան է բաց թողել այդ պահանջադրի համաձայն: Յեթե նյութերի գնահատում կատարողը տնտեսության վարիչն է կամ մատանապանը, նա հենց այստեղ «Գումար» սյունյակում գրում է բաց թողածի արժեքը: Իսկ յեթե գնահատման գործը կատարում է հաշվապահը, այս սյունյակը լցնում է նա: Կարգադրություն մեջ պետք է լինի 4 ստորագրություն: Առաջին ստորագրությունը պետք է լինի պահանջողինը, այսինքն այն անձնավորությունը, վորը մթերք կամ նյութ է պահանջում: Որինակ՝ բրիգադիրը պահանջում է, վոր իրեն ցորեն բաց թողնեն սերմի համար: Հետևապես, բրիգադիրը ստորագրում է կարգադրության մեջ «Պահանջողի» տողի վրա: Յերկրորդը վարչության ստորագրությունն է՝ հանձնողն իր նախագահի կամ վարչության անդամի: Յերրորդ ստորագրությունը ապրանք բաց թողնող տնտեսության վարիչի կամ մատանապանի ստորագրությունն է, իսկ չորրորդը — ստացողինն է, այսինքն նրանը, ով ստացել է այդ նյութը: Կարգադրությունը կազմվում է 2 որինակով, վորոնցից մեկը մնում է մատանապանի մոտ, վորպես մթերք կամ նյութ բաց թողնելու արդարացեցիչ փաստաթուղթ, իսկ մյուսը հանձնվում է տվյալ մթերքը կամ նյութը պահանջողին:

ՄԱՍՆԱՊԱՆԻ ՄԹԵՐԱ-ՆՅՈՒԹԱՅԻՆ ԳԻՐԳ

Արժեքների շարժման հաշվետուումը տարվում է քանակական արտահայտություն: Մառնում գումարային հաշվետուում չի տարվում:

Մթերքի կամ նյութի ամեն մի անվան համար մթերանյութալին գրքում հատկացրվում է մի քանի յերես, յեղնելով այն

նկատառումից, թե տարվա ընթացքում տվյալ մթերքի քանի՞ գըրանցում և հնարավոր:

Թույլ չի տրվում, վոր միասակ արժեքները հաշվեառումը կատարվի չափի տարրեր միավորներով (որինակ լիտրերով ու կիլոգրամներով):

Մառանապանի մթերա-նյութային գիրքը (продуктово-материальная книга кладовщика) բացվում է փաստական մնացորդների գրանցումով՝ պահեստի ստուգման փաստաթղթերի վրա:

Մառանապանը մթերա-նյութին գրքի մեջ գրանցումները կատարում է անմիջապես մթերքներ ընդունելիս կամ բաց թողնելիս: Թե մուտքի և թե յեւթի ամեն մի գրանցում կատարվում է ինքնուրույն տողի վրա:

Ստացվող մթերքները մուտք գրելիս ի չարը գործ դնելու առաջն առնելու համար գրասենյակը հետևում է, վոր մառանապանը ժամանակին մթերքները մուտքի մեջ մտցնի: Դրա կապակցութամբ մեծ քանակութամբ մթերքներ ստանալու ժամանակ գրասենյակը պարտավոր է ամեն որ մառանապանի գրքում կատարած գրացումները համեմատել գրասենյակում ստացված փաստաթղթերի հետ:

Ամսի վերջում մառանապանը հաշվում է մթերքների յեւթն ու մուտքը ամսվա ընթացքում և դուրս և բերում մնացորդները, վորոնք հենց այստեղ էլ գրանցվում են գրքում այն գծի տակ, վորը բաժանում է տվյալ ամիսը հետևյալ ամսից:

Այն կոլխոզներում, վորոնք չունին փորձված ու լիովին գրագետ մառանապաններ, մառանի արժեքների շարժման հաշվեառումը կենտրոնանում է կոլխոզի գրասենյակում: Նման դեպքերում մառանապանն ընդունում է իրեն հանձնվող արժեքներն այն ակտի համաձայն, վորն արտացոլում է արժեքների գրությունը մառանապանին հանձնելու որը: Մառանապանն ամեն որ արժեքներն ընդունելու և բաց թողնելու գործարքները վերջացնելուց հետո այդ գործարքներ ձևակերպող ըլոր փաստաթղթերը

հանձնում և գրասենյակին, ստորագրութուն առնելով ավագ հաշվապահից՝ առանձին տետրակում, վորը միշտ գտնվում է մառանապանի մոտ:

Մառանապանի աշխատանքը սիստեմատիկորեն ստուգելու նպատակով՝ նոր գործարքային աարին սկսելուց առաջ, մառանապանին փոխելու դեպքում, ապրանքային արտոգրանքը պետութանը հանձնելու պլանը կատարելու դեպքում և այլն— պարբերաբար պետք է պարզվեն արժեքների փաստական մնացորդները մառաններում: Պահեստի ստուգման մասին ակտ է կազմվում հետևյալ ձևով:

Դեմոստրացիոն կարգի	Արժեքները նմանակ	Չափի միավորները	Պահեստում կա	Փաստաթղթերի թիվը և գրքի կոդի	Ավելցուկներ			Պահաս			Նկատողութուններ պահելու և վորակի մասին	
					Միտակ	Միջի	Գումար	Միտակ	Միջի	Գումար		

ՀԱՅՎԵԱՌՄԱՆ ԳԻՐԲ

1. Դրամարկղի,
2. Ընթացիկ հաշիվների,
3. Արժեքաթղթերի:

ԿՈԼԽՈԶԻ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԲՆԵՐԸ

Դրամարկղային դիրքն այն հիմնական փաստաթուղթն է հանդիսանում, վորով անց է կացվում ամբողջ դրամական յեւթն ու մուտքը և հաշիվներն առանձին անհատներին, հիմնարկութուն-

հետքի և կազմակերպություններէ հետ: Դրամարկղային գրքից քաղվածքներ են արվում կողմնակի բոլոր հաշիվների նկատմամբ: Այդ պատճառով վոչ մի դեպքում չի թույլատրվում գիրքը վոչ կեղտոտել, վոչ ջնջել և մաքրել: Յեթե անհրաժեշտ է ուղղում մտցնել գրքում գրածի մեջ, պետք է վրայից գծել և վերևից կարմիր թանաքով նորը գրել, իսկ յերեսի տակը նշան անել, վոր ուղղածին հավատալ:

Կոլխոզի գրամարկղային գործարքներն անց են կացնվում մուտքի ու չեւքի որդերների միջոցով: Առանց նրանց վոչ մի գործարք չպետք է կատարվի, իսկ հետո գրանցումները մտցըրվում են գրքի մեջ: Որդերներին կցվում են այն փաստաթղթերը, վորոնց հիման վրա փող է ստացվում կամ փող է արվում (գիմուսներ, տեղեկագրի հաշիվներ և այլն): Գրասենյակը հետևում է, վոր փաստաթղթերը բավարար կերպով ձևակերպված լինին, գրված լինին պարզ, առանց ջնջումների ու մաքրումների և ունենան վարչության ստորագրությունը, վորով թույլատրվում է վճարումը:

Դրամարկղային գրքի մեջ մտցրվում է կոլխոզի թե անբաժանելի գումարներին և թե ընդհանուր գումարներին վերաբերող ամեն մի մուտք ու չեւք: Բանկը մտցրած ամեն մի գումար կամ իր սեփական ընթացիկ հաշիվից ստացած ամեն մի գումար նույնպես անսպաճան պետք է անցնի գրամարկղային գրքով:

2—3 որով առհաշիվ (подотчет) տված գումարները դրամարկղի հաշիվից դուրս չեն գրվում: Այդպիսի դեպքերում առհաշիվ անձի ստացականը պահվում է գրամարկղում և համարվում են կանխիկ փող, իսկ այն գումարները, վորոնք արվում են 3 որից ավելի ժամկետով, դուրս են գրվում առհաշիվ անձի անունով դանադան անձանց և հիմնարկությունների փոխադարձ հաշվարկների հաշիվով:

Նույն գրքում կոլխոզի բանկում ունեցած ընթացիկ հաշիվի հաշիվ է բացվում:

Այս հաշվում գրվում են վոչ միայն կոլխոզի գրամարկղից ընթացիկ հաշիվին (текущий счет) հանձնվող գումարները կամ գրամարկղի համար ընթացիկ հաշիվից հանած գումարները, այլ և փոխադրությունների (перечисление) միջոցով ընթացիկ հաշիվին ավելացրած կամ դուրս գրված գումարները, վոր կատարում է բանկը պետական մթերողների, կոոպերացիայի և այլ հիմնարկությունների ու կազմակերպությունների հետ ունեցած անկանխիկ հաշվարկները կարգով (путем безналичных расчетов):

Նույն գրքում բացվում է արժեքաթղթերի հաշիվ և հաշիվ է առնվում կոլխոզի ունեցած և ձեռք բերած Տրակտորացիներ, Պտիցոցիներ ինկուբատորի ակցիաները, պետփոխառության որլիգացիաները (այնն մի փոխառությունն առանձին) և դուրսատնտեսական մատակարարման փաստաթղթերը:

Նույն հաշիվը հաշիվ է առնում յերկար ժամանակյա արտադրական վարկավորման ֆոնդին տված վճարումները, այս վճարումների գրանցումը կատարվում է բանկի տված անդորարի հիման վրա այլ վճարումները ստանալու մասին:

ՀԱՇՎԵԱՌՄԱՆ ԳԻՐԲ

1. Ծախսերի,
2. Դրամական ֆոնդերի,
3. Փոխադարձ հաշիվների,
4. Վարկերի:

Այս գրքում հաշիվ է բացվում այն բոլոր կազմակերպությունների և հիմնարկությունների հետ, վորոնց հետ կոլխոզը փոխադարձ հաշիվներ ունի:

Յերեսի վերնագրում, «Հաշիվ» տողի վրա ամեն մի կազմակերպության ու հիմնարկության համար հաշիվ է բացվում: Յերբ կոլխոզը բնանյութ է ստանում, այն ժամանակ գրանցվում են ստանալու ամիսն ու թիվը, փաստաթղթերի (բեռնագրի կամ Փակտուրաչի) համար, իսկ «Դրանցման բովանդակությունը», սյունյակում մատնանշում է, թե ինչ է ստաց-

ված, «Մտցրված է» սյունյակում մատնանշվում է ստացածի արժեքը:

Յերբ կոլխոզը բնանյութ (натура) է բաց թողնում, գրանցումը կատարվում է նույն կարգով, միայն բաց թողածի արժեքը գրվում է «Ծախսված է» սյունյակում: Իսկ յեթե դործարքը դրամական (փողային) է, առանց մթերքների կամ նյութերի, «Քանակ» սյունյակը չի լցնվում, կոլխոզի ստացածը մտցրվում է «Ստացված է» սյունյակը, իսկ կոլխոզի վճարումները «Ծախսված է» սյունյակը:

Նույն կարգով հաշիվ է բացվում և գրանցումներ են կատարվում այն վարկերի մասին, վոր կոլխոզը ստացել է բանկից:

Առանձին հաշիվ է բացվում կոլխոզի անրաժանելի գումարների համար: Այս հաշիվը բացվում է 1932 թվի մնացորդի կամ անբաժանելի գումարների վերածախսման գրանցումով: Տարվա հաշվեկալվածությունից ստացված մնացորդը ավյալ հաշվի մեջ գրանցվում է «Ստացված է» սյունյակում, իսկ վերածախսումը (перерасход) — «Ծախսված է» սյունյակում: Հետագայում, տարվա ընթացքում, այս հաշվի մուտքի մասում գրանցվում են մուտքի վճարները, արտադրական յերկար ու կարճ ժամկետով տված վարկերը, զանազան անվերադարձ ստացումները և անպետք կամ անհարկավոր անբաժանելի ունեցվածքի վաճառումից ստացած գումարները: Տարվա վերջին այս հաշվի մուտքի մեջ մտցրվում է այն անբաժանելի ֆոնդը, վորը հատկացրվում է 1933 թվի յեկամուսները բաշխելիս:

Յելքի մասի մեջ մտցրվում են կոլխոզի յերկար կամ կարճ ժամկետով տված վարկերի վճարումները, այն գումարները, վորոնք ծախսված են զանազան ունեցվածք զնելու համար (լծկան և մթերատու անասուններ, գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ և այլն), նաև այն ծախսերը, վոր արված են շինարարություն և կառուցումները համար, յերկարամյա տունկերի համար և այլ հիմնական ներդրումները:

Նույն դրքում հաշիվ է բացվում արտադրական ծախսերի համար, վարչական-ադմինիստրատիվ ծախսերի համար և զանազան հատկացումների և վճարների համար: Այս հաշիվները լրացնվում են դրամարկային գրքից, մատնապանի մթերանյութային գրքից, զանազան կազմակերպությունների և հիմնարկությունների հետ ունեցած հաշիվներից: Դա կատարվում է այդ գրքերում գրանցումը կատարելուց հետո:

Արտադրական ծախսերի անվանակարգն է. ՄՏԿ-ներին տրված վճարումները թե պայմանագրերի և թե այլ հաշիվները համաձայն, սերմի և զնովի կերի (ֆուրսժի) արժեքը, ընթացիկ մանր նորույումները, մանր ինվենտարի և նյութերի գնումները, վառելիքի և քսելու (յուղելու) նյութերի գնումները, վնասատուների դեմ պայքարելու ընկերությունը վճարած գումարները և այլ ծախսեր: Ծախսի ամեն մի տեսակի համար բացվում է առանձին մեկ կամ մի քանի յերես:

Յեթե գրանցման են յենթարկվում բնականով արած ծախսերը (натуральные расходы), մատնանշվում է նրանց քանակը ու դրամական արժեքը՝ ամուր պետական մթերման զների համաձայն:

Կազմակերպությունների և հիմնարկությունների, դրանց թվում նաև բանկերի հետ ունեցած բոլոր փոխադարձ հաշիվների մեջ անպայման հարկավոր է դուրս բերել տարվա սկզբում յեղած գրությունը:

ԳՈՐԾԱՐՔԱՅԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԲՐԻԳԱԳԱՆԵՐՈՒՄ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊԼԱՆՆ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՇՎԵԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

1933 թվին յուրաքանչյուր արտադրական բրիգադա կոլխոզում ունի իր տարեկան պլան-առաջադրությունը, կազմված տարվա սկզբին: Կոլխոզի վարչություն պարտավոր անելիքն է հանդիսանում հետևել նրա իրագործման ընթացքին, քանակական և վորակական ցուցանիշներին: Այդ նպատակին ծառայում է գործարքային տեղեկագրի ձևը (форма оперативной сводки)

բրիգադաներում արտադրական պլանն իրագործելու հաշվետու-
ման մասին: Յուրաքանչյուր բրիգադայի համար լցնվում է ա-
ռանձին բլանկ: Յեթե մի բրիգադա մի քանի տարբեր աշխա-
տանքներ է կատարում, որինսակ՝ հերկում է, ցանում է, յուրա-
քանչյուր աշխատանքի համար հաշվետուումը կատարվում է ա-
ռանձին բլանկով: Ուստի հանձնարարվում է իրագործման հաշ-
վետուումը կատարել վոչ թե բոլոր տեսակի աշխատանքների հա-
մար, այլ միայն ամենազվազորների համար, որինսակ, հերկ,
ցանքս, վոսոզում, սառնահերկ (աշնան ցել), բամբակի հավա-
քում, հացահատիկների հավաքում, խոտի հարելը և այլն: Հա-
ցահատիկների հավաքման դեպքում հաշվետուումը կատարվում է
ըստ մշակույթների:

Կոլխոզն ամեն օր իր բրիգադիրներից պետք է տեղեկանք
ստանա պլանի կատարման հաշվետուումն համար: Աշխատանքի
կատարման հաշվետուումն առաջին օրը ցուցանիչները մտցնվում
են միայն «Հաշվետուումն օրը» սյունյակի մեջ: Յերկրորդ օրվա-
նիձ սկսած հաշվետուումը տարվում է նաև յերկրորդ սյունյա-
կում: Սկզբում լցնվում է առաջին սյունյակը՝ համաձայն բրիգա-
դիրից ստացած ավյալների, յերկրորդ սյունյակում գրվում է ամ-
բողջ աշխատանքի գումարը, հաշված նաև նույն օրվա աշխա-
տանքը: Այսպես, օրինակ, վարը (հերկը). № 1 բրիգադան հեր-
կել է 4 հեկտար, այդ մտցրվում է «Հաշվետուումն օրը» սյունյա-
կը: Մյուս օրը նույն գրիգադան հերկել է 6 հեկտար: Այն ժա-
մանակ «Հաշվետուումն օրը» սյունյակում գրվում է 6, իսկ «Աշ-
խատանքի սկզբից» սյունյակում—10 և այլն:

Աշխատանքների օրերի հաշվետուումը կատարվում է միայն
այն կոլխոզիկներին նկատմամբ, վորոնք զբաղված են յեղել տե-
ղեկազրի (սվոդկայի) կողմից հաշվի առնվող աշխատանքով: Նույ-
նը վերաբերում է և լծկան ուժին (ձիերին, յեղներին, դոմեշ-
ներին), իսկ վորովհետև ցուցանիչների յերկրորդ սյունյակում՝
«Աշխատել են . . . կոլխոզիկներ», «ձիաներ», «յեղեր ու դո-
մեշներ» ածող գումարը հաշվի է առնվում աշխատանքի օրերով,

այս վերջին սյունյակը լցնվում է հետևյալ կերպով: Հերկ կամ
ուրիշ աշխատանք կատարել է հաշվետուումն առաջին օրը—10
մարդ. «Հաշվետուումն օրը» սյունյակում գրվում է 10, իսկ բոլոր
կոլխոզիկների աշխատանքի օրերի քանակը «Աշխատանքի սկզբ-
բից» սյունյակում գրվում է նույն 10: Յերկրորդ օրը աշխատել
են նույն 10 կոլխոզիկները: Այն ժամանակ առաջին սյունյա-
կում գրվում է 10, իսկ յերկրորդ սյունյակում—20: Յեթե յերրորդ
օրը աշխատել են 15 կոլխոզիկներ, այն ժամանակ առաջին
սյունյակում գրվում է 15, իսկ յերկրորդում—35: Նույն ձևով
զբանցման են յենթարկվում լծկան անասունների քառորդերը:

Գործարքային տեղեկազրի հաշվետուումն յենթակա

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԵՏՈՒՄԸ

Կոլխոզներում աշխատանքի հաշվետուումն ոկզրնակալն փաթ-
տաթուղթ է հանդիսանում «Անվանացուցակը» (поименный пе-
речень): Տարվա պլան-առաջադրությունը բրիգադան ստանում
է արտադրական պլան կազմելիս, իսկ «Անվանացուցակի» մեջ
մտցրվում է փաստորեն կատարած աշխատանքը և այն կոլխոզ-
իկների ազգանուններն ու անունները, վորոնք մասնակցել են
ավյալ աշխատանքին: Յուրաքանչյուր կոլխոզիկի կատարած
աշխատանքի քանակի գրանցումը կատարվում է ամեն օր և յու-
րաքանչյուր 5 օրից հետո հաշվում են, թե յուրաքանչյուր կոլ-
խոզիկ առանձին վերցրած 5 օրվա ընթացքում ընդամենը վոր-
քան աշխատանք է կատարել և այդ մտցրվում է «Ընդամենը աշ-
խատանք է կատարել» սյունյակը:

Հետևյալ սյունյակում գրվում է աշխատանքների միավո-
րի գնահատումը (գործավարձային գնահատումը) աշխատերով,
«Հաշված է աշխատորեր» սյունյակի մեջ է մտցրվում աշխատո-
րերի քանակը, վոր հասնում է կոլխոզիկին 5 օրվա ընթացքում
նրա կատարած աշխատանքի համար արտադրանքի նորմաների
համաձայն: Այնտեղ էլ, համապատասխան սյունյակներում, նշա-

ՀԱՅԿԻՆ
ՈՒՍՏԻՆՄԻՏԱ
ԸՍՏՈՒՈՒԼՅՈՒՆ
Հայաստանի Կոմկուլտ

51-19

61244-67

ՀԱՅԿԻՆ
ՈՒՍՏԻՆՄԻՏԱ
ԸՍՏՈՒՈՒԼՅՈՒՆ
Հայաստանի Կոմկուլտ

նակիւում են աշխատորերի քանակի ավելացումները լավ կամ վատ աշխատանքի համար և կոլխոզնիկներին աշխատանքի քանակը:

Յուրաքանչյուր անվանացուցակ ունի «Բրիգադա» մակագրութուն: Անպատճառ պետք է մատնանշել բրիգադայի համարը և բրիգադիւրի ազգանունը: Կոլխոզի վարչութիւնը պետք է համարներ դնի անվանացուցակի ամեն մի թերթի վրա:

Աշխատորերի գրանցումները անվանացուցակից մտցնւում են կոլխոզնիկի աշխատանքային գրքուկի մեջ, զորի ամեն մի չերեսի վրա նշանակւում են կատարվող գրանցումների համարն ու ամսաթիւը: Աշխատորերի յուրաքանչյուր գրանցման ժամանակ անպայման նշանակւում են գրանցման ամսաթիւը, անվանացուցակի համարը, աշխատանքի անունը, այն, թե վորքան աշխատանք է կատարված, քանի աշխատանքային որ է հաշված է, բացի գրանից, կոլխոզնիկին քանի աշխատանքային որ է ավելացրած կամ պակասեցրված աշխատանքի լավ կամ վատ վորակի համար: Աշխատանքային գրքուկիւմ ամեն ամիս անպատճառ կատարվում է կոլխոզնիկին հաշված աշխատորերի քանակի գումարը: Աշխատորքուկի ամեն մի գրանցման տակ պետք է լինի բրիգադիւրի ստորագրութիւնը:

Աշխատորերի հաշվաւուման գրքուկիւմ գրանցումները կատարվում են անվանացուցակից՝ ըստ բրիգադաների: Յուրաքանչյուր աշխատունակ կոլխոզնիկի ազգանունի մոտ գրվում են աշխատանքային գրքուկի և անդամագրքուկի համարները: Աշխատորերը գրքուկի մեջ պետք է մտցնել, հաշվելով աշխատանքի վորակի համար կատարած հավելումներն ու պակասեցումները:

Յերբ ամիսը վերջանում է, կատարվում է կոլխոզնիկի բոլոր աշխատորերի գումարը և գրքի է անցկացվում, թե յուրաքանչյուր կոլխոզնիկ քանի աշխատոր է ունեցել տվյալ ամսում, իսկ վետրվար ամիսից սկսած յուրաքանչյուր ամսվա գումարին ավելացրվում է կոլխոզնիկի նախորդ ամիսների ընթացքում հաշվարկած աշխատորերի քանակը և մտցրվում է «Ընդամենը տար-

վա սկզբից» սյունյակը: Դեկտեմբեր ամսում, յերբ այս սյունյակի մեջ մտցրվում է վերջին գրանցումը, ստացվում է կոլխոզնիկի աշխատորերի գումարն ամբողջ տարվա համար:

ՀԱՇՎԱՐԿ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻ ՎԱՍՏԱԿԱՏ ԱՇԽԱՏՈՐԵՐԻ ՀԱՍԱՐ

Կոլխոզնիկներին կատարած աշխատորերի համար հաշվարկ տեսնելու սկզբնական փաստաթուղթ է հանդիսանում «Ավանսներ տալու տեղեկագիր» (ВЕДОМОСТЬ): Վորե է մթերք կամ փող ավանսով բաց է թողնում ըստ բրիգադաների: Նրանց չափը սահմանում է կոլխոզի վարչութիւնը, համաձայն յուրաքանչյուր բրիգադայի աշխատանքի քանակի և վորակի: Տեղեկագրում մատնանշվում է, թե ինչ է բաց թողնում և քանի աշխատանքային որի համար: Ավանսի գումարը բրիգադայի աշխատորերի քանակի վրա բաժանելու միջոցով ստացվում է մի աշխատորի համար տրվող ավանսի գումարը: Այս տեղեկագրի մեջ մտցրվում են ավանս ստացող կոլխոզնիկների ազգանունները և այն, թե վերջիններին քանի աշխատոր է հաշված տարվա սկզբից: Բրիգադայի բոլոր ավանս ստացող կոլխոզնիկներին աշխատորերի գումարը մտցրվում է տեղեկագրի այն սողը, վորտեղ գրված է «Ավանս է տրվում աշխատորերի համար», իսկ հետո ավանսի գումարը բաժանվում է աշխատորերի այդ քանակի վրա և ստացվում է մի աշխատորվա ավանսային գումարը: Հետո յուրաքանչյուր ավանս ստացող կոլխոզնիկի ազգանունի մոտ մեկ աշխատորվա ավանսի գումարը բազմապատկվում է կոլխոզնիկի աշխատորերի քանակի վրա և «Հասնում է վճարելու» (причитается к выдаче) սյունյակիւմ գրվում է յուրաքանչյուր կոլխոզնիկին հասնող ավանսի գումարը: Յեթե ավանսը բնանյութով է տրվում, հաշվարկը կատարվում է «Քանակը» սյունյակիւմ չափի միավորի մատնանշումով, որինակ՝ ցորեն—70 կիլո կամ 0,7 ցենտներ, իսկ յեթե տեղեկագիրը կազմված է փողային ավանս վճարելու համար, մտցրվում է «Գումար» սյունյակի մեջ: Բնա-

սյուլթով ավանս տալու ամեն մի դեպքում հենց այդտեղ կատարվում է այդ տրվածի գնահատումը փողային արտահայտութեամբ, հաշված ամուր պետական մթերման գներով: Դրա համար յուրաքանչյուր կոլխոզնիկին տրվող ավանսի քանակի մոտ գրվում է այդ տրվող սյուլթի փողային արժեքը: Այսպիսով յերբ ավանսը ընանսյուլթով է տրվում, «Հասնում է վճարելու» սյուլթակի մեջ գրվում է և քանակը և գումարը: Իսկ յեթե ավանսը դրամական է, սյուլթակի մեջ գրվում է միայն գումարը: Տեղեկագիրը կազմում է հաշվապահը և նախադահի կամ նրա տեղակալի ստորագրութեամբ հանձնվում է մառանապանին կամ գանձապահին կատար ածելու համար: Ավանս ստացող կոլխոզնիկը ստորագրում է տեղեկագրում:

Ավանսային տեղեկագիրը սյուլթ է ծառայում կոլխոզի անդամների հետ հաշվարկ կատարելու գրքում հետագա գրանցումներ կատարելու համար: Այդ գրքում յուրաքանչյուր անդամի համար անձնահաշիվ (лицевой счет) է բացվում և նշանակվում է անդամագրքույկի համարը: Ամբողջ տարվա ընթացքում այդ գրքի ձախ կողմում գրվում է, թե կոլխոզնիկը ինչ է ստացել, վորքան և ինչ գումարի: Ավանսային տեղեկագրից այդ գրքի մեջ է մուծվում կոլխոզնիկին տվածը և նշանակվում է տալու ժամանակը («Թիվ» սյուլթակում), փաստաթղթի համարը (տեղեկագրի համարն ըստ կարգի), իսկ գրքի աջ կողմում, «Վաստակած աշխատորեր» (выработано трудодней) վերնագրի տակ, աշխատորերի հաշվետման գրքից ամեն ամիս մուծվում է այն աշխատորերի քանակը, վոր ունեցել է թե կոլխոզի անդամ կոլխոզնիկը, վորը անդամագրքույկ ունի, և թե նրա ընտանիքի աշխատող անդամները: Դրա համար «Ընտանիքի անդամները» յենթավերնագիրն ունի չորս չցված սյուլթակ: Նրանցից առաջինի մեջ գրվում են ընտանիքի գլուխ կազմող կոլխոզի անդամի վաստակած աշխատորերը, իսկ հետևյալ սյուլթակները մեջ—ընտանիքի մյուս անդամների աշխատորերը: Այսպիսով ամեն մի տող, մատնանշելով ամիսը, ցույց է տալու այն աշխատորերի քանակը,

կը, վոր ունեցել են թե տնտեսութեան գլուխ կոլխոզի անդամը և թե նրա ընտանիքի աշխատունակ անդամները, վորոնք աշխատում են կոլխոզում և «Ընդամենը ամսվա ընթացքում» (итого в месяц) սյուլթակում հաշվի է առնվում ամբողջ տնտեսութեան վաստակած աշխատորերի գումարը:

Փետրվար ամսից սկսած «Ընդամենը ամսվա ընթացքում» սյուլթակը լցնելուց բացի լցնվում է նաև «Ընդամենը տարվա սկզբից» սյուլթակը և այսպիսով տարվա վերջում ստացվում է աշխատորերի տարվա գումարը, վորոնք մասնակցում են յեկամուտների վերջնական բաշխմանը:

Անձնական հաշիվ բացվում է միայն կոլխոզի անդամի համար, այսինքն ընտանիքի գլխի համար և այդ հաշվի մեջ են մտցրվում թե ընտանիքի գլխի և թե կոլխոզի աշխատանքին մասնակցող բոլոր աշխատունակներին տված բոլոր հատուցումները (выдача) և հաշված աշխատորերը: Նույն հաշվում կա և այլ հաշվարկներ է համար, վորտեղ գրի են անցվում կոլխոզնիկին տված ամեն տեսակի հատուցումները կամ նրանից ստացածները, վորոնք ուղղակի կերպով չեն վերաբերում վաստակած աշխատորերին: Այսպես են որինակ պարզատրման հատուցումները, նպատակային կամ անվերադարձ գումարների, մուտքի վրձարների ստանալն ու տալը, փոխառութեան վերաբերող հաշվարկները և այլն:

Կոլխոզի անդամի անձնական հաշվի վերջին ձևը դա «Բնանսյուլթային ու դրամակտն յեկամուտների բաշխման տարեկան հաշվարկն» է: Այս ձևի մեջ մտցրվում են յեկամուտների վերջնական բաշխման ժամանակ հասնող մթերքներն ու ֆուրաժը՝ քանակով և գումարով, իսկ փողը—միայն գումարով: Այս տրվյալները մտցրվում են յեկամուտների վերջնական բաշխման սյուլթերի հիման վրա:

Կոլխոզի անդամի վերջնական հաշվեփակումը տարվա աշխատանքի համար գրանցվում է նրա անդամային գրքույկում, վորի մեջ սխտեմատիկաբար գրվում են բոլոր ավանսային վճար

րուհներն ի հաշիվ ամբողջ տնտեսութեան վաստակած աշխատորե-
րի: Գրանցվում են վճարման (հատուցման) ամսաթիվը, տեղեկա-
գրի համարն ըստ կարգի, այն, թե ինչ է արված, ապա «Վոր-
քան աշխատորեքի համար» սյունյակում գրվում է ավանսային
տեղեկագրում մատնանշած աշխատորեքի քանակը, այն, թե վոր-
քան է արված և արժեքը:

Նույն գրքույկում կա մի թերթ՝ «Առանձին պարգևատրա-
կան» հատուցումներ (особые выдачи по премированию), վոր-
տեղ մտցրվում են թե կոլխոզի անդամին և թե նրա ընտանիքի
աշխատունակ անդամներին տված բոլոր պարգևները (премия)
և մատնանշվում է պարգևատրելու ամիսն ու օրը, այն, թե տը-
վյալ ընտանիքի աշխատողներից ով է պարգևատրվում, ինչի
համար, ինչ է ստանում և պարգևի արժեքը: «Հատուցումներ այլ
հաշվարկներով» (выдача по прочим расчетам) թերթի մեջ գըր-
վում են կոլխոզնիկներին տրվող այն հատուցումները, վորոնք
կապված չեն վաստակած աշխատորեքի հետ:

«1933 թ. հաշված աշխատորեքը» (начислено трудодней
на 1933 г.) թերթում ընտանիքի բոլոր աշխատողների տարեկան
աշխատորեքի գումարը պետք է համապատասխանի աշխատորեքի
հաշվեհաճման գրքի և կոլխոզնիկի անձնական հաշվի գումարներին:

«1933 թ. բնանշութային և դրամական յեկամուտների բաշ-
խման հաշվարկ» թերթում, ձախ կողմից, «հատուցումների անու-
նը» (наименование выдач) սյունյակում գրվում է յուրաքան-
չյուր մթերքի կամ ֆուրածի (կերի) անունը: «Ընդամենը հա-
նում է . . . աշխատորեքի հաշվարկով» (итого причитается
из расчета . . . трудодней) տողի վրա մատնանշվում է
կոլխոզնիկի ընտանիքի բոլոր աշխատունակ անդամների վաստա-
կած աշխատորեքի քանակը: «Քանակը», «Գումարը» յենթավեր-
նագրերի տակ գրվում է այն մթերքների քանակն ու արժեքը,
վորոնք հասնում են կոլխոզի անդամին ամբողջ տարվա աշխա-
տանքի համար: Այս հաշվարկը կազմվում է հասուկ տեղեկագրով
յեկամուտների բաշխման ժամանակ:

«Ավանս և տված տարվա ընթացքում» սյունյակում գրվում
է փաստորեն տվածների գումարը, վոր վերցնվում է կոլխոզնիկի
անձնական հաշվից:

«Վերջնական հաշվեհաշիվում համարում է» (следует в окон-
чательный расчет) սյունյակի մեջ մտցրվում է այն տարբերու-
թյունը, վոր ստացվում է կոլխոզի անդամին հասնելիքի և նրա
կողմից արդեն ավանսով ստացածի մեջ: Նույն ձևով լցնվում է
նաև «Փող» տողը:

Անգամագրքույկի շապիկի յերեսին գրվում են՝ կոլխոզի,
գյուղխորհրդի, գյուղի, օայտնի անուանները, անդամագրքույկի
համարն ըստ կարգի, կոլխոզի անդամի ազգանունն, անունն ու
նոր անունը:

Անդամագրքույկի առաջին յերեսում գրվում են՝ կոլխոզի
մեջ մտնելու ժամանակը և, ըստ կարգի համարներով, կոլխոզնի-
կի ընտանիքի բոլոր անդամները՝ թե աշխատունակները և թե
անաշխատունակները, ներառյալ նաև ընտանիքի գուլթը, և մատ-
նանշվում են յուրաքանչյուրի ծնված տարին և ընտանիքի աշ-
խատունակ անդամների մասնագիտությունը:

Անդամագրքույկի յերեսում գրանցման և յենթարկվում կըլ-
խոզի անդամի համայնացրած ունեցվածքը: Մատնանշվում են՝
համայնացման ժամանակը (թիվը), փաստաթղթի համարը և ամ-
բողջ համայնացրած ունեցվածքի արժեքը: «Հատկացրված և ֆոն-
դերին» (начислено в фонды) գրվում են համայնացրված ունեց-
վածքի արժեքի անբաժանելի մասը և փայային մասը: Այս յեր-
կու մասերը պետք է համապատասխանեն ամբողջ գումարին:

Յերը կոլխոզնիկը համայնացնում է իր ունեցվածքը, այդ
տվյալները գրվում են ձևի (ֆորմայի) առաջին տողի վրա, իսկ
յերը կոլխոզնիկը լրացուցիչ կերպով համայնացնում է վորև է
ունեցվածք, գրանցումները կատարվում են յերկրորդ և յերրորդ
տողերի վրա: Գրանցումները մայրնիխ ամեն մի տող հաստատ-
վում է կոլխոզի անդամի կողմից:

Նույն կերպով գրանցման ենթարկվում նաև մուտքի
վճարումները (вступительные взносы).



34-11
2541

30. 355

«Ազգային գրադարան»



NL0207408

НАРКОМЗЕМ АССР

ИНСТРУКЦИЯ

К ФОРМАМ СЧЕТОВОДСТВА НА 1933 г.
В КОЛХОЗАХ АССР

ИЗДАНИЕ НКЗ АССР

БАКУ

1933
